

## ԳԼՈՒԽ Ը

Կան աշխարհքիս մէջ մեծասիրտ մարդիկ, որ Դիոգինեսի՝ կամ անապատ ականներ ու եւ կամ տեսակ մը փիլիսոփաներու պէս կ'արհամարհեն հարստութիւն եւ շատ անգամ խստութեամբ կը դատեն հարուստները եւ նոցայ հարստութեան միջոցները, բայց փորձը յայտնի կը ցցնէ, որ շատ քիչեր կը գտնուին, որ իրենց սրտին ճշմարիտ համոզմունքը կը խոստովանին, վասնզի արդար կամ անհրաւ շահն նաեւ ձեռք բերելու եւ պահելու համար բնական յարմարութիւն եւ պարագայից օգնութեան պէտք է: Շատ անգամ դիտողութեան արժանի է, որ չբաւորութենէ հարստութեան ելած մարդիկ ոչ միայն իրենց կենցաղավարութիւնը կը փոխեն, այլեւ իրենց լեզուն. արհամարհ ոսկին կ'անցնի իր արժանավայել աթոռը, ուր մարդկութիւնը զինք ամուր եւ անշարժ գտնողեր է. վասնզի առանց անոր ոչինչ մեծ գործ կարելի չէ առաջ տանիլ:

Սպարտա այն օրը, որ Յունաստանի տեր լինիլ մտքին մէջ հաստատեց, իւր երկաթի դրամը թողուց եւ ոսկին ձեռք առաւ:

Թեոդորոս բարձր եւ ազնիւ սրտով այն մարդոցմէ էր, որ ոսկին չեն պաշտեր, բայց անոր կարեւորութիւնը մեծ գործ մը առաջ տանելու համար լաւ կը ճանաչեն, ուստի Բագրատունի Տիկնոջ գանձին օգնութիւնը իր սրտին յոյս բերաւ, եւ երբ սեղան նստան ամենքը նշմարեցին, որ իւր ճակտին կնճիռները բաւական պարզուած էին, եւ այդ մարդը աւելի քաղցր ու զուարթ կը խոսեր:

Ներսէս Տայոց գաւառի Իշխան գիւղէն էր, գրեթէ քառասնամեայ, վայելուչ, սիրուն կերպարանոք էր. ազատ եւ չբաւոր ծնողաց զաւակ, զինուորութեան հետեւելով, սրամիտ եւ ուսումնասէր ի փոքր հասակէն, մայրենի լեզուին հետ յունարէն նաեւ սովորելով, Յայաստանի զանազան գաւառները շրջելէն վերջ, թողած էր հայրենի տունն ու երկիրը, գնացեր էր Յունաստան, Անտիոք, Աղեքսանդրիա եւ Կոստանդնուպոլիս զինուորական աստիճաններու մէջ բաւական յառաջայ դիմութիւն ունեցեր էր, ոչ զինուորական քաջութեանց համար՝ այլ աստուածաբանական վիճաբանութեանց մէջ բաւական հմտութիւն ցցնելուն: Վասնզի ո՞վ էր մարդ այն ատեն, որ գիտուն կամ տգետ այն անսահման եւ անիմանալի գիտութեան անտեղեակ լինէր. արքայական գահույից բարձրութեան վրայ նստեալ կայսրը ոսկի գաւազան ի ձեռին աստուածածին բնութեան քննութեան կը պարապէր լրջաբար, լրջաբար նոյնպէս խոհակերը ջնջոց եւ դրգալ ձեռին, նոյն նիւթերուն վրայ կը